



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

368.5
L - 55

ԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԱԶՈՐԻ ՎԱՐՉՈՒՔՑՈՒՆ

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
— — — ԿԱՆՈՆՆԵՐ — — —



ՏԵՐԵՎԱՆ
1929

L 1 MAR 2010

12 FEB 2013

ԱՆԴՐԻՔԵՍՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԱԶՈՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

368.5

Ա-55

ՁԻՌ

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

=====ԿԱՆՈՆՆԵՐ=====

1924



ՏԵՐԵՎԱՆ
1929

15967-57

Հայոց թիւն և տված
Ս. Խ. Հ. Մ. Ֆ. Կ. կից
Ապահովագրական խորհրդի
կողմից (արձ. № 35 12
(Վլ 1928 թ.)

«ՀԱՅԱՍՏԱՆԻ Մ. ԵՄ»
Ս. Խ. Հ. Մ. Ֆ. Ժ. Կ. առեղա-
կալ Մ. ՖՐՈՒՄԿԻՆ
1928 թ. սպասուի 9-ին

ԱՆԱՍՏՈՒՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԳԼՈՒԽ I

§ 1. Մահվան գեղքերից անասունների կամա-
վոր ապահովագրությունը կատարում է Պետապը
համաձայն սույն կանոնների, ըստ վրում Պետապը
վճարում է անասունների մահվան վճարը, վրը կա-
րող և պատահել՝

1) Բոլոր տեսակի հիվանդություններից, նյուն
թվում և մարմնական բնական թերություններից:

2) Բոլոր տեսակի գժբախտ պատահարներից,
բնչպես որինակ, գազանների պատառությունց, հրդեհից,
կայծակնահարությունից, ցրտահարությունից, խեղ-
դիլուց, ջրահեղձ լինելուց, թունավորվելուց, ռտար
առարկաներ կուլ տալուց, ելեքտրական հոսանքի հար-
վածից, արևահարությունից և նման բաններից:

3). Ամորձիքները հանելու (կոտել) հետևանքով,
յեթե այդ կատարված և անտանարուժական կազմի
կողմից:

Գրառակ. № 1658 (թ) Տիրամ 3000

Հայոց կազմի 2-րդ տպ. պատ. № 1418

(12810-58)

4). Նախազգուշողական սրսկումների հետևանագով, յեթե սրսկումը կատարել ե անասնաբուժական կազմը:

5). Անբուժելի հիվագության կամ այն դժբախտ գեպօւմ, յերբ անասունը կարող է մահանալ կորցնելով իրա բոլոր տեսակի ունակությունները—բանվորական, մսի, կաթի և ցեղական—մորթելուց:

6). Յերբ անասունը մորթվում է հարկադրաբար անասնաբուժական—սանիտարական մարմինների կարգադրությամբ վարակիչ հիվանդությունները վորոշելու և արմատախիլ անելու նպատակներով:

§ 2. Պետապը չի վճարում այն գեպօւմ, յեթե անասունը գողացված ե, փախցրված կամ անհետ կռել ե, ինչպես և այն գեպքերում, յերբ ապահովագրը մորթում ե նրան վորպես մսացու:

§ 3. Հատուկ նշանակություն ունեցող անասունները (կրկեսային և ձիարշավային ձիերը, բարձր արժեք ունեցող ցեղական անասունները) Պետապը կարող է ապահովագրել հատուկ համաձայնությամբ ու հատուկ տարիքներով նրանց այդ առանձնահատուկ նշանակության կորստից (հիվանդության կամ գըծքախտ պատահարի հետևանքով) յեթե նույնիսկ այդ անասունները կորցրած չլինեն իրենց մյուս տեսակի ունակությունները և մորթելու կարիք չլինի:

Այսպիսի գեպքերում Պետապը պատասխանառու յե ապահովագրական գումարի և նրանց նոր արժեքի տարրերության գումարի չափով, վորը վորոշվում է հատուկ հանձնաժողովի կողմից անասնաբուժի մասնակցությամբ:

§ 4. Կամագոր կարգով կարող են ապահովագր-

վել բոլոր ահսակի գյուղատնտեսական արդյունաբերական անասունները, անկախ այն հանգամանքից թե նրանք կոպարային կարգով ապահովագրվուծ են թե վոչ:

§ 5). Զեն ապահովագրվում այն անասունները վորոնք՝

ա) Կորցրել են իրենց արդյունաբերական և բանվորական ընդունակությունները ֆիզիքական թերությունների կամ ընդհանուր թույլության հետևանքով:

բ) Հիվանդ անասունները, մինչև նրանց առողջանալը:

գ) Կատաղած անասունների կողմից կծած (իսածած) անասունները յերկու ամսվա ընթացքում՝ հաշված խածման որվանից: Նույնպիսի ժամանակամիջոցում չի թույլատրվում ապահովագրելու այն հոտի անասունները, յեթե հաստատված ե, վոր այդտեղ կատաղածությամբ հիվանդ անասուն կա, վորը կարող է կծոտել մյուս անասուններին:

դ) «Փորձնական» (նրանք, վորնք ծառայում են զանազան գիտական փորձեր կատարելու) անասունները, ինչպես և այն անասունները, վորոնք ոգտագործվում են հակաժանուախային նյութեր ու սիլուկ պատրաստելու:

յե) Պետապի ապահովագրկան հասակների տարիքից բարձր կամ ցածր անասունները:

§ 6. Անասունը կարող է ապահովագրել թե նրա տերը և թե գրավի ընդունողը ու կապալառուն, ինչպես և այն անձնավորությունները, վորոնք անմիջական իրավական շահ ունեն ապահովագրության առաջընկելիք անասունից:

ԾԱՆՈԹ. — Ապահովագրի բացահայության դեպքում նրա պարտականությունը պետք է կատարի նրան փոխազրողը։ Գյուղական վայրերում այդ փոխադրման համար առանձին ձեռվականություն չի պահանջում։

§ 7. Մասնավոր մարդկանց առևտրի համար պահպող անասունները կարելի յեւ ապահովագրել միայն հատուկ պայմաններով։

Նույն մարդկանց պատկանող տնտեսական նպատակներով ոգտագործվող անասունները կարող են ապահովագրվել սույն կանոնների հիման վրա։

§ 8. Առանձնահատուկ պայմաններում գտնվող անասունները (ինչպես որինակ տեղափոխման ժամանակ, ամորձիքները հանելիս, սրսկելիս,) ապահովագրվում են հատուկ կանոններով և տարիքներով։ Այդ գեղքում այդ հատուկ կանոններով չնախատեսնված հարցերի վերաբերմամբ պետք է զեկվարվել սույն կանոններով։

§ 9. Այն վայրերում, ուր համապատասխան հանրագետական ովենադրական կարգով հայտարարված կլինին վորպես անասունների համաձարակային հիվանդությունների վայրեր, Պետապը կարող է գագարեցնել անասունների ապահովագրությունը։

Նույնպես Պետապը կարող է հրաժարվել ապահովագրել այն տնտեսությունների անասունները, վորոնք անասնաբուժական կազմի կողմից առնված կլինին տուանձին հսկողության վարակիչ հիվանդության կասկած լինելու հետևանքով։

§ 10. Տվյալ տնտեսության միենույն տեսակի բոլոր անասունները պետք է ապահովագրվեն, յեթե

հասել են արդեն ապահովագրական հասակի։ թույլ ետքում ապահովագրելու միենույն տեսակի անասուններից միայն միենույն սեռին պատկանողները, ինչպես և միայն բոլոր ցեղական անասունները միենույն տեսակի և սեռի։

Այն տնտեսություններում, վորտեղ կան ապահովագրված անասուններ, պիտի 14 օրվա ընթացքում ներկայացնեն ապահովագրելու հետեւյալ անասունները, ապահովագրվածների տեսակին պատկանող։

ա) Նախնական ապահովագրությունից հետո այդ տնտեսությունը բերված, բ) այդտեղ ապահովագրական հասակի հասած, զ) առողջացած անասունները, վորոնք սկզբնական ապահովագրությունից դուրս ելին մեացել հիվանդության հետեւանքով։

Սույն հոգվածը խախտելու դեպքում Պետապը իրավունք ունի ապահովագրական վարձատրությունը մերժելու (§ 40 կ. Բ.)։

ԳԼՈՒԽ II

Ա. Անասունների Պետապի պատասխանաթվության առավելության կարգը կարգը յեզ պայմանները

§ 11. Անասունների ապահովագրությունը կընթափում է համաձայն ապահովագիրի զրավոր հայտարարության։ Այդ հայտարարության մեջ՝ ապահովագիրը պարտավոր է բոլոր արված հարցերին տալու ճիշտ պատասխաններ։

Այն գեղքում, յերբ կհայտնաբերվի, վոր ապահովագիրը անձիշտ տեղեկություններ է տվել, վորոնք

Պետապի պատասխանառության չափը վորոշելու համար եյական նշանակություն ունեցող հանգամանքներ են, Պետապը իրավունք ունի, յեթե այդ հանգամանքը նրան հայտնի յե դառել ապահովագրական գեղքից 14 որ առաջ, փոխելու ապահովագրության պայմանները, դադարեցնելու ապահովագրությունը վերագրածնելով ապահովադիրին մնացած ժամանակամիջոցի համար: Իսկ յեթե այդ հանգամանքը պարզվում ե ապահովագրական գեղքից հետո, Պետապը իրավունք ունի մերժելու վճարել ապահովագրական վարձատրություն:

ԾԱՆՈՒԹՅ.—Յեթե անդորրագրի վրա կլինեն գրված ապահովագրությունը կնքելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները և յեթե անդորրագրի կտրոնը կատորագրվի ապահովագրի կողմից, ապա դրավոր հայտարարություն ներկայացնելու կարիք չկա:

§ 12. Ապահովագրության առաջարկված անառուների գնահատությունը կատարում ե Պետապի ներկայացուցիչը կամ անասնաբուժական կազմը:

§ 13. Ապահովագրության պայմանագիրը համարվում ե հաստատված անդորրագրի (պալիս) տալուց հետո: Ապահովագրական անդորրագրի (պալիս) մեջ պետք ե հիշատակված լինեն.

ա) Պետապի այն մարմինը, վորը տվել ե ապահովագրական անդորրագրիը:

բ). Ապահովագրի անուն ազգանունը, կամ ով լինելը նշենով նրա իրավական հարաբերությունը ապահովագրված գույքի վերաբերմամբ (տերը, կապալառու, կոմիսիոներ և այլն):

գ). Ապահովագրված առարկան, գույքը, անառունի տեղը:

դ). Ապահովագրական ժամկետի սկիզբը և վախճանը:

յե). Ապահովագրումարը և ապահովագրական գնահատությունը:

զ). Ապահովագրինը, դրամատուրքը (յեթե այդպիսին սահմանված ե), նրանց վճարման ժամկետը ու տեղը:

հ). Ապահովագրական անդորրագրի տալու ժամանակը և տեղը:

Անդորրագրը պետք է ստորագրված լինի Պետապի ներկալցուցիչի կողմից:

§ 14. Ապահովագրությունը վերանորոգելու համար ապահովագրիը, մինչև ապահովագրության ժամկետի վերջանալը, պետք է Պետապին համապատասխան հայտարարություն անի: Պետապը իրավունք ունի նոր գնահատություն կատարելու և վերանորոգի ապահովագրությունը նոր ապահովագրումարով՝ համաձայն հետազոտման նոր տվյալների:

ԾԱՆՈՒԹՅ.—1. Տվյալ վայրում գոյություն ունեցող վարակիչ հիվանդությունները չեն կարող արգելք հանդիսանալ ապահովագրությունը վերանորոգելու:

2. Յերբ անասունը հիվանդ յեղել ապահովագրության ընթացքում վոչ պակաս 2 տարի, ապա նրա ապահովագրության վերանորոգումն հետեւյալ 3-րորդ և հետագա տարիների համար չի արգելվում:

ԳԼՈՒԽ III.

ՊԵՏԱԿԻ պատասխանաւուրյան չափը

§ 15. Ապահովագրական գումարի չափը վորոշվում ե ըստ ապահովադիրի ցանկության, ուսկայն վոչ ավելի տվյալ վայրի համար Պետապի կողմից սահմանված, տվյալ տեսակի անսունի համար, չափից, ըստ վորում անսունի ապահովագրական գումարը չպետք ե ավելի լինի նրա փաստական արժեքի $\frac{3}{4}$ -ից:

Լրցուցիչ ապահովագրության դեպքում, անտունի ապահովագրական գումարը չպետք ե ավելի լինի կոպարային դրույքի հետ միասին նրա փաստական արժեքի $\frac{3}{4}$ -ից:

ԳԼՈՒԽ VI.

Սպահովագրության ժամկետը

§ 16. Ապահովագրությունը կնքում ե մեկ տարի ժամանակով: Մեկ տարուց պակաս ժամանակով ապահովագրություն թույլ ե տրվում հետեւյալ պայմաններում.

ա). Այն անասունները, վորոնք ձեռք են բերված կամ հասել են ապահովագրական հասակի տվյալ անտեսության մեջ սկզբնական ապահովագրությունից հետո, ինչպես և այն դեպքում, յերբ վերապահովագրվում ե անասունը նոր ավելի բարձր ապահովագրական գումարով:

բ). Այն ապահովագրությունները, վորոնք իրենց անտեսական հատուկ գործառնություններով ունեն կարձատե-

րնույթ (անասունների գերացնելը, տեղափոխելը, ամուծիքները հանելը և այլն), կատարվում են հատուկ կանոնների համաձայն:

§ 17. Ապահովագրության սկիզբ և վախճան համարվում են այն որացույցային թվերը, վորոնք նիշված կլինեն ապահովագրական անդորրագրում:

Սակայն յեթե անասունը ապահովագրվում ե առաջի անգամ (սկզբնական), Պետապի պատասխանաւությունը սկսվում է ապահովագնի վճարումից: Եթե անցնելուց հետո, և ապահովագրիը միայն այդ ժամկետը անցած լինելու դեպքում իրավունք ունի ապահովագրական վարձատրություն պահանջելու ապահովագրական դեպք պատահելիս, բացի այն դեպքերից, վորոնք նախատեսնված են § 18-ում: Իսկ ապահովագրությունը վերանորոգելու դեպքում, յեթե այդպիսին կատարվում է իրա ժամանակին (§§ 14, 19), Պետապի պատասխանաւության մեջ ընդհատում չի առաջանում:

§ 18. § 17-ով սահմանված 15 որյա տարակետումը նկատի չի առնվում և Պետապի պատասխանաւությունը սկսվում է ապահովագրությունը կնքելուց հետո անմիջապես հետեւյալ դեպքերում:

ա). Յեթե անասունը մահացել է դժբախտ պատահարից կամ ամուծիքները հանելուց (кастрация) (§ 1 կ. 2, 3):

բ). Յեթե տվյալ անտեսության նույն տեսակի ապահովագրված անասունին պատկանող մեկ ուրիշը այդ ժամկետում հասնում է ապահովագրական հասակի:

գ). Յեթե ապահովագրվում ե այնպիսի մի ա-

նասուն, վրբը սկզբնական ապահովագրության ժամանակ չեր ապահովագրված իրա հիվանդության պատճառով:

§ 19. Անասունների ապահովագրության Պետակի պատօսիանատվությունը (Քառար վճարելու) շարունակվում է ապահովագրության ժամկետը լրանալուց հետո դարձյալ 15 որ, թեկուղ և ապահովագինը վճարված չէինի: Այդպիսի ժամանակաշրջանում ապահովագրական դեպքի ապահովագրական վարձատրությունը վճարելիս, ապահովագիրից պահփում է մեկ տարվա ապահովագին:

§ 20. Ապահովագրությունը ժամկետից առաջ դադարում է հետեւյալ դեպքերում. 1) յերբ ապահովագրված անասունը պակասում է վոչ թե ապահովագրական դեպքից ինչպես նախատեսնվում է § 1. այլ մեջ վորեն այլ պատճառով, 2). Յերբ ապահովագրված անասունը տյա կամ այն կերպ այդ տնտեսությունից դուրս է գնում, պակասում ե՝ ա) անցնելով մեկ ուրիշ տիրոջ (ծախված և այլն), բ) վերցրված ե դատական վորոշումով կամ բնագրավված ե, ուղմական ձիահավքի յենթարկված, 2) § 28-ում մատնանշված դեպքում:

ԾՄՆՈԹ. — Այն դեպքում յերբ անասունը ծախվում է մորթվելու համար վորպես մսացու և յեթե մորթելու պահանջը հարուցել է Պետապի ներկայացուցիչը կամ անասնաբուժը (§ 31), ապահովագրությունը չի դադարում: Այդ դեպքում ապահովագրական վարձատրության չափը վորոշում է համաձայն § 42-ի:

ԳԼՈՒԽ 4.

Ապահովագրական

§ 21. Ապահովագիրը ապահովագրական անդորրագիր ստանալիս պետք է վճարի սահմանված ապահովագինը կամ յեթե հետաձգված է, ապա նրա մի մասը և գրաշմատուրքը (յեթե այդպիսին սահմանված է): Ապահովագրության պայմանագիրը մտնում է իրա ուժի մեջ միայն այն ժամանակ, յեթե ապահովագինը, կամ հետաձգված ապահովագինի առաջի մուծումը վճարվում է: Յեթե հետաձգված ապահովագրության հերթական մուծումը իրա ժամանակին չի կատարված, ապա Պետապը ազատ և այդ ժամկետանց ժամանակամիջոցում կատարված ապահովագրական դեպքի ապահովագրական վարձատրություն վճարելուց:

§ 22. Ապահովագինի գրույքը վորոշում է ըստ Պետապի տարիթային դրույքների սահմանված որենսգրական կարգով:

§ 23. Այն դեպքերում, յերբ պետք է նոր ապահովագրություն կնքվի ապահովագրության ժամկետի ընթացքում, ավայալ տնտեսության մեջ անասունների կազմի մեջ փոփախություններ առաջանալու հետեւաքով, ապահովագինը պետք է հաշվել մինչև ապահովագրության վերջնական ժամկետը ամսեամիս, ըստ վորում ամսվա մասերը (վոչ լրիվ ամիս) հաշվում են վորպես լրիվ ամիս:

§ 24. Ուժում ապահովագրինը պետք է վերադառնել միայն հետեւյալ դեպքերում,

ա). Յեթե սխալ և հաշված յեղել ապահովագրինը

և ավել և զանձված, պետք ե վերադարձնել այդ աշ-
կել գումարը:

բ). Այն անասունների համար, վորոնք վերջնա-
կանապես տվյալ անտեսությունից դուրս են ընկել:
Այդ գեղքում պետք ե վերադարձնել մինչև ապահո-
վագրության վախճանը մնացած ժամանակի ապահո-
վագինը հաշվելով ամսեամիս:

գ). Յեթե Պետապը դադարեցնում է ապահովա-
գրությունը ապահովագիրի կողմից սխալ տեղեկու-
թյուններ տալու հետեւանքով (§ 11.), այն չափով,
ինչպես ասված ե «ը» կետում:

դ). Յեթե Պետապի պահանջմամբ կատարված
վերագնահտառությունը պտկասեցրել է ապահովագրա-
կան գումարը, այն չափով, վորքան կազմում է մինչև
ապահովագրության վախճանը մնացած ժամանակա-
շրջանի համար:

յե). Յեթե անասունը մահանում է սկզբնական
ապահովագրության 15-րդից ընթացքում, այնպիսի
պատճառներից, վորոնց համար Պետապը պատասխա-
նատու չե. այդպիսի գեղքերում ապահովագինը վե-
րադարձվում է լիովին:

զ). Այն գեղքում, յերբ ապահովագրությունը
դադրում է համաձայն § 28-ի, այդ գեղքում վերա-
դրձրվում է ապահովագին այն չափով, ինչպես առ-
ված ե «ը» կետում:

ԳԼՈՒԽ VI.

Կողմերի փոխեարաբերությունները մինչեղ ապա-
հովագրական գեղքը

§ 25. Ապահովագիրը պարտավոր է § 26-ի կար-
գով հայտնելու՝

ա). Այն անասունների մասին, վորոնք նոր են
ձեռք բերված, կամ ժամանակավոր կերպով նրա տըն-
տեսության մեջ են գիրացնելու, կթելու կամ այլ
նպատակներով:

բ). Այն անասունների մասին, վորոնք հասել են
ապահովագրական հասակի:

գ). Այն առողջացած անասունների մասին, վո-
րոնք չեյին ապահովագրված իրենց հիվանդության
պատճառով: Սույն հողվածում նիշված պահանջները
ապահովագիրի կողմից չկատարվելու դեպքում Պե-
տապը իրավունք ունի ապահովագրական վարձատրու-
թյուն չվճարելու (կետ «ը» § 40):

§ 26. § 25-ում առված անասունների քանակի
փոփոխության դեղքում ապահովագիրը պարտավոր
է հայտնելու քաղաքներում Պետապի գործակալին,
իսկ գյուղերում Պետապի գործակալին կամ գյուղխոր-
հրդին 14-րդից ընթացքում հաշված փոփոխության
որքանից, համաձայն § 10-ի: Գործակալները և գյուղ-
խորհուրդները պարտավոր են այդպիսի գեղքերում
տալու վկայական արված հայտարարության մասին
Պետապի կողմից սահմանված ձեռվի:

§ 27. Պետապը իրավունք ունի, մինչև ապահո-
վագրության վախճանը, յուր ներկայացուցիչների
միջոցով, ստուգելու անասունների թիվը և նրանց
գնահատությունը, նրանց պահպանման պայմանները
և տարված խնամքը ապահովագիրի անտեսության
մեջ նրա կողմից, ինչպես և նրա հաղորդած տեղե-
կությունների ճշտությունը: Այդպիսի գեղքերում
ապահովագիրը պարտավոր և աջակցելու Պետապի
ներկայացուցիչներ:

§ 28. Յեթե Պետապը կհայտնաբերի ապահովագործի կողմից ապահովագործած անասունի անխնամք վերաբերմունք և հսկողության բացակայություն, իրավունք ունի ապահովագործի լունը դադարեցնելու:

Այդպիսի դեպքերում պետք է կազմել համապատասխան արձանագրություն և ապահովագործին պետք է հայտնի անձամբ, ստորագրությամբ, կամ պատվիրված նամակով:

§ 29. Ապահովագործի տնտեսության մեջ բոլոր տեսակի ապահովագործած կամ չապահովագրված, բայց ապահովագրված անասունի տեսակին պատկանող, բոլոր հիվանդությունների մասին ապահովագործ պարտավոր և հայտնելու անմիջապես և համեսյան դեպս վոչ ուշ յերեք օրվանից Պետապին կամ գյուղխորհըրդին, իսկ հնարավորության դեպքում նաև մոտակա անասնաբուժին կամ անասնաբուժակին:

§ 30. Ապահովագործի տնտեսության մեջ կամ նույն ընակավայրում հայտնված վարակիչ հիվանդությունների ժամանակ ապահովագործը պարտավոր և կատարելու բոլոր այն միջոցները, վորոնք նախատեսված են այդ առթիվ յեղած վորոշումներով, մատնացույց արված նրան անասնաբուժական կազմի կողմից:

§ 31. Այն դեպքում, յերբ անասունը հիվանդ և անբուժելի հիվանդությամբ և անասնաբուժական կազմի վորոշամբ կարող է տեղի ունենալ շուտափության կամ անասունի բոլոր տեսակի ունակությունների կատարաւալ կորուստ (բանվորական, մսի, կաթի և ցեղականի), բայց այդ հանգամանքը չի խանգարում նրա միսը ողագործելու ապահովագործին Պետապի ներկայացուցիչը կամ անասնաբուժը առաջարկում

է մորթել անասունը: Յեթե ապահովագործը չկատարի այդ առաջարկությունը և անասունը մտնանա, Պետապը վճարում է ապահովագրական վարձատրություն այն չափերով, ինչպես մատնանշված է § 37-ում, բացի § 38-ում թված դեպքերից:

ԳԼՈՒԽ V^{II}.

Կողմերի փոխեարաբերությունները ապահովագրական դեպքի ժամանակ

19810-58

§ 32. Ապահովագրված անասունի մահվան մասին, ապահովագործը պարտավոր և անմիջապես հայտնելու համեսյան դեպս վոչ ուշ 2 օրվանից, Պետապի գործակալին կամ գյուղխորհըրդին, իսկ հնարավորության դեպքում նաև մոտակա անասնաբուժին կամ անասնաբուժակին:

§ 33. Ապահովագործը պարտավոր է պահելու անասունի դիմակը, կամ այդ դիմակի մնացորդները, լուծարքային տկտ կազմելու և ներկայացնելու համար, սակայն վոչ ավելի 2 օրվանից, իսկ 1/XI—1/IV վոչ ավելի 4 օրվանից: Այդ կարգը չի պահանջվում այն դեպքում, յեթե անասունը ունեցել է վարակիչ հիվանդության նշաններ և յերբ թաղելու թույլ և տրվել գյուղխորհուրդը:

§ 34. Ապահովագրված անասունի մահվան մասին տեղում պետք է կազմվի, յերկու վկաների ներկայությամբ, ակտ (արձանագրություն) Պետապի կողմից սանմանված ձեռվ, Պետապի գործակալի կամ անասնաբուժի կողմից, իսկ նրանց բացակայություն դեպքում գյուղխորհի կողմից, անմիջապես ստանա-

(15967-58)

լով այդ մասին ապահովագիրից հայտարարություն իրա անասունի մահվան մասին, համենայն գեպս վոչ ուշ քան 7 որից հետո, հաշված հայտարարություն ստացած որվանից:

§ 35. Այն դեպքում, յերբ բացարձակապես անհնար և ներկայացնել զիակը կամ նրա մասերը, վորոնցով կարելի լինի ապացուցել նրանց պատկանելիությունը մահացած անասունին: Այդ դեպքում պետք ե այդ հնարավորության բացակայության պատճառը գրանցվի ակտի մեջ, իսկ անասունի մահը հստատվի վկաների ցուցմունքներով:

ԳԼՈՒԽ V III.

ԳՅԱՍԻ ՀԱՓԻ ՀԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԵԿԱՆ ՎԱՐԴԱՏՐՈՒԹՅԱՆ ԳՐՈՇՈՒՄԸ

§ 36. Ապահովագրված անասունի մահվան ապահովագրական վարձատրության չափը վորոշվում է ապահովագրական գումարի լրիվ չափով, համենայն գեպս վոչ բարձր անասունի իրական արժեքից հաշվի առնելով նրա մահվան որը նման առողջ անասունի շուկայի արժեքը:

ԾԱՆՈԹ.—Յեթե անասունի իրական արժեքը նրա մահվան որում ավելի ցածր կլինի ապահովագրական գումարից, ապա պետք ե վրաբեր այդ իրական արժեքի չափով:

37. Այն անասունի համար, վորը մորթված կլինի նրա հիվանդության անբուժելիության հետեւ վանքով, համաձայն անասնաբուժի յեզրակացության, կամ կմահանա այն հիվանդության պատճառվ, վորի

համար և ապահովագիրին առաջարկված և յեղել մորթել (§ 31): ինչպես և այն անասունի համար վարը մորթված կլինի, թեև և առանց անասնաբուժի յեղրակացության, բայց պետապի գործակալի կամ կյալդի որդի թույլատվությամբ, յեթե այդ անասունին, դժբախտ պատահարի հիականքով, սպասնում եր անխուսափելի ու շուտափույտ մահ, ապահովագրական վարձատրությունը վորոշվում է ապահովագրական գումարի չափով, գուրը գալով մսի արժեքը, վորը վորոշվում է տեղական շուկայի գներով, համենայն դիպովով պակաս 40% ապահովագրական գումարի:

Բարձր արժեքով ցեղական անասունների մորթելու գեպական մորթելում, մսի արժեքը բոլոր պարագաներում ել գորոշվում և տեղի շուկայի գների չափով: Այդպիսի հարկագրական մորթելը ու նրա պատճառները պետք է հստատված լինեն գյուղխորհրդի կողմէց:

ԾԱՆՈԹ.—Յեթե ամբողջ միսը չի ոգտագրվելու, այլ նրա միայն մի վորոշ մասը, ապա պետք ե պահել միայն այդ մսի արժեքը:

§ 38. Ապահովագրական վարձատրություն տըրպում է լիովին հետեւյալ դեպքերում:

ա) Այն անասունների մորթելու համար, վորոնց միսը սովորաբար տեղական բնակչությունը չի դորձածում:

բ) Յեթե հարկագրաբար մորթված անասունի միսը համաձայն անասնաբուժի գրավոր յեղրակացության, գործածելու համար պիտանի չի:

§ 39. Պետապը ազատ ե ապահովագրական վարձատրություն վճարելուց հետեւյալ դեպքերում:

ա) Յեթե կհաստատվի, վոր անասունը մահց-

ված ե, դիտավորյալ՝ կերպով ապահովագիրի կողմէց:

բ) Յեթե ապահովահրական վարձատրություն ստանալու պահանջը կներկայացվի անստունի մահանից 2 տարի հետո:

ԾԱՌԱՅԹ.—Գյուղական բնակչության անառունները ապահովագրելիս պետք է պահպանել հետևյալ կանոնները.

ա) Գյուղական ծուխը զրկվում է ապահովագրական վարձատրություն ստանալու իրավունքից այն դեպքում, յեթե դաշտարանով կը հաստատվի, վոր ապահովագրական դեպքը առաջացել է այդ տան անդամներից մեկնումեկը ապահովագրական վարձատրություն ստանալու դիտավորությամբ:

բ) Յեթե ապահովագրական դեպքը առաջացել է գյուղական տան անդամներից մեկնումեկի կողմից դիտավորյալ՝ կերպով, սակայն վոչ թե ապահովագրական վարձատրություն ստանալու համար, այլ մի այլ նկատառումով, այդ դեպքում ապահովագրական վարձատրություն տրվում է պահելով տան այդ հանցավոր անդամին հասանելիք մասը:

§ 40. Պետապը իրավունք ունի մերժել ապահովագրական վարձատրություն վճարելու հետևյալ դեպքերում.

ա) Յեթե ապահովագիրը հնարավորության դեպքում հրաժարվում է զննության ներկայացնելու մահացած անստունի դիտակը կամ նրա մնացորդները:

բ) Յեթե ապահովագրական դեպքի վնասի լու

ծարքի ժամանակ կպարզվի, վոր ապահովագրական հասակի անստունների թիվը ավելի յեքտն ապահովագրված անստունները (համաձայն § 10 և 25), Այդ դեպքում Պետապը իրավունք ունի մերժել վճարելու այնքան առաջի հերթի մահացած անստունների վնասը, վորքան կկազմեն այդ ապահովագիրի անստունների քանակից ավելին (չապահովագրված) համեմատելով ապահովագրվածների հետ:

գ) Յեթե անստունը մահանում է ապահովագրության սկզբի 15 որվա ընթացքում վորեն հիվանդության պատճառով (բայց վոչ թե դժբախտ պատահարից),

դ) Յեթե անստունը մահացել է շնորհիվ այն րանի, վոր ապահովագիրը անտեսել է, չի կատարել անսանաբուժական հսկողության առաջարկած միջոցները կանխելու համար վարակիչ հիվանդությունը տարածելու կամ հիվանդ անստունը առողջացնելու:

յե) Յեթե ապահովագիրը, հնարավորություն ունենալով հանդերձ, չի հայտնել ապահովագրական դեպքի մասին համաձայն սույն կանոնների § 32 և 29-ի:

զ) Յեթե ապահովագիրը ապահովագրությունը կնքելու ժամանակ կտա այնպիսի, իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ, վորոնք կարող են եյական նշանակություն ունենալ վորոշելու համար ապահովագրվող որեկտի մահվան սպառնալիքի մոտալուս լինելը, կամ ապահովագրական վարձատրության չափը վորոշելու:

ԳԼՈՒԽ IX.

Ապահովագրական վարձատրության վեառումը

§ 41. Ապահովագրական վարձատրությունը ալլրվում է (կամ ուղարկվում է փոստով ապահովագիրի հաշվին) առանց ուղացնելու, համենայն դեպս վոչ ուշ քան մեկ ամսից հաշված լուծարքային ակտի կազմելու որվանից (կամ ակտը ստացվելու որվանից): Այն դեպքում, յերբ ապահովագիրը մեղադրված է լինում դիտավորյալ կերպով ապահովագրական դեպք առաջացնելու մեջ ապահովագրական վարձատրություն ստանալու դիտավորությամբ, պետք է ապահովագիրը վկայական ներկայացնի գործի կարճելու կամ դատական վորոշման մասին:

Այն դեպքում, յերբ սևիականատիրական իրավունքների մասին կառաջանան վեճեր, ապա ապահովագրական վարձատրության վճարումը հետաձգվում է մինչեւ այդ հարցի դատական լուծումը:

ԾԱՆՈԹ.—Այն դեպքում, յերբ ապահովագիրը համաձայն չի լինի վնասի վորոշման չափի հետ, որան վճարվում է Պետապի կողմից վարչված գումարը՝ ապահովագիրը իրավունքունի պահանջելու լրացուցիչ վարձատրություն §§ 45 և 46-ի մտքով:

§ 42. Այն դեպքում, յերբ անասնաբուժի յեղակացության համաձայն միաը ոգտագործելու համար մորթելու անսառունը ապահովագիրը կվաճառի մեկ ուրիշին մորթելու համար, ապահովագրական վարձատրություն արվում է միայն այն դեպքում, յերբ ու-

պահովագիրը վկայական կներկայացնի անասունի մորթելու վրաստի մասին:

§ 43. Յեթե ապահովագիրը ստանում է վարձատրություն հարկադրաբար սպանված կամ մորթած անասունի համար ՀԺԿ ի մարմիններից կամ մի այլ աղբյուրից, ապա Պետապը միայն վճարում է ապահովագրական վարձատրության արբերությունը (այն գումարի, վոր ստածել է ապահովագիրը համեմատելով ապահովագրական գումարի հետ): Խսկ յեթե ապահովագիրը ստացած գումարը հավասար է կամ ավել ապահովագրական գումարից, Պետապը այլև վոչինչ չի վճարում:

§ 44. Ապահովագրական վարձատրությունը վը ճարելուց հետո Պետապը, սոսնց այդ մասին վորեն արձանագրությամբ ձեռկերպելու, իրավունք է ստանում բոլոր այն յերիորդ անձնավորությունների վերաբերամբ հայց հարուցելու ու վասը պահանջել. վորոնց կարելի յեւ մեղադրել այդ ապահովագրական վնասի առաջացման մեջ:

Յեթե ապահովագիրը չի հրաժարվի իրա իրավունքներից յերրորդ անձնավորությունների վերաբերմամբ, ապա Պետապը ազտա է համապատասխան չափով ապահովագրական վարձատրություն վճարելուց:

ԳԼՈՒԽ X.

Բողոքարկում յեվ դատի հանձնում

§ 45. Գործակալների սխալ գործունեյության մասին բողոքները պետք է ներկայացնել Հայպետապին

իսկ Հայպետապի անարդար գործուղությունների մաս-
սին Անդրպետապի Վարչության: Անդրպետապի Վար-
չության գործուղությունների մասին պետք և բողո-
քել Պետապի Գլխավոր Վարչության:

Պետապի գործողությունների վրա բողոք ներ-
կացացնելը չե զրկում ապահովադիրներին իրենց շա-
հերը ընդգեմ Պետապի պաշտպանելու դատական ճա-
նապարհով:

§ 46. Դատական հայց ընդդեմ Պետապի պետք
և հարուցել այն դատական մարմիններին, վորտեղ
գտնվում ե Պետապի այն մարմինը, վորը կնքել է
ապահովագրությունը. կամ այնտեղի դատական մար-
միններին, վորտեղ գտնվում է Հայպետապը կամ Ան-
դրպետապի Վարչությունը.



301C

44 188